




ԳՐՊԾ. ՍՐԱՊԻՈՆ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
ՏԻՏՂ. ԱՐՔՊՍ. ՔԵՐՍՈՆԻ ԶԵՔԻԱՅ
ՆԵԿ. ԸՆԴ. ԱԲԲԱՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

14 Փետրուար 1890

16 Մայիս 1965

ՇԱՌԱԽԻՂ ՇՆՈՐՀԱԼԻ
ԽԱՐԲԵՐԴԻ ՈՍԿԵՂԷՆ ԴԱՇՏԻՆ
ԶԱԽԱԿ ՀԻՆԱԽՈՒՐՅ ՓԱՌԱՊԱՆԾ ԴԱՏԵՄԻ
ԿՐՕՆԱԽՈՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԿԻԻՂԱԾ
ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ
ԽՈՆԱՐՀ ՀԵԶԱՀԱՄԲՈՅՐ ԱՆՁՆԱՆՈՒԷՐ
ԱՐԺԱՆԱԽՈՐ ՈՐԴԻ
ԵՒ ՅԱԶՈՐԴ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ
ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԱՌԱՋՆՈՐԴ
ՊԱՅԾԱՌԱՏԵՍ ՇԻՆԱՐԱՐ ԵՒ ԱՆԽՈՆՋ
ՍԻՐԵԼԻ ԱՄԷՆՈՒՆ ԱՆԽՏԻՐ
ՍԵՐՄԱՆՈՂ ԵՐԿՆԱԺՊԻՏ ՇՆՈՐՀՆԵՐՈՒ
ՆԵՐՀՈՒՆ ԹԱՐԳՄԱՆ ՍՈՒՐԲ ԱԽԵՏԱՐԱՆԻ
ԶԱՐԴԱՐԻՉ ԱՂՕԹԱԽՈՐ ԿՂԶԵԱԿԻՆ
ՀԱՅՐԵՆԻ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ ՄՇՏԱՎԱՌ ՀՐԱՀՐԻՉ
ԵՒ ՍՐԱԹՈՒՉ ՈՒՂԵԽՈՐ
Ի ՍԷՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՅԱԶԱՐՄ ՍԵՐՈՒՆԴԻՆ
ԱՆԹԱՌԱՄ ՊՍԱԿՆԵՐՈՎ ԵՐԿՆԱՅԻՆ
ԹՈՂ ՀԱՆԿՉԻ
ԵՐԱՆԱԽԷՏ ԼՈՅՍԻՆ ՄԷՋ ՅԱՐԱԶՈՒԱՐՃ
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ՀՈԳԵԿԻՑ ՈՐԴԻՆԵՐՈՒ ՍՐՏԻՆ ՄԷՋ
ԱՊՐԻ ՅԱԽԷՏ ԻՐ ՅԻՇԱՏԱԿՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ԳՐԱԳԾ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐԲՊ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ

Գրադ. Սրապիոն Արբա. Ուլուհոճեան ծնած է 1890ի փետր. 14ին, Սարրերդի Դատեմ գիւղը: Մկրտութեան անունով Ստեփան, դաւակը Գարրիէլ եւ Վարդիկ Փաշայեան բարի ծնողներուն, մինչեւ տասնեւչորս տարեկան հասակը կը յաճախէ տեղական վարժարան, վայելելով ծընողական դուրսդուրանքին հետ՝ Ծովապաշխարհի սքանչելի բնութեան ամբողջ հմայքը:

Տասնեւհինգ տարեկանին, զգալով իր սրտին մէջ բուռն փափաք մը դէպի աւտուածանութիւն կեանք, առնելով օրհնութիւնը իր երկրպագ ծնողներուն եւ ապագայ նահատակ Գրադ. Իսրայէլեան Եպիսկոպոսին, ճամբայ կ'ընէ դէպի Վենետիկ, ուր կը հասնի՝ Սամսոնի ու Պոլսոյ վրայով՝ 1905ի Սեպտ. 10ին:

Ուշիմ ու բարեպաշտ պատանի, մենատաննի լուծեան մէջ՝ սրբութեան օծումով հասակ կ'առնէ. Սուրբ Դադարի դեղեցիկ բնութիւնն ու խաղաղ միջավայրը իր մէջ կը զրոյժեն հեղահամբոյր սիրտ եւ խոնարհ հոգի, միանգամայն զուարթամիտ ու ժրջան բնութրութիւն, թէեւ ծաղիկ հասակէն վնասուած էր առողջութիւնը:


Վանական զղեստաւորութիւնը տեղի կ'ունենայ նոյն տարուան Հոկտ. 1ին: Երեք տարի ետք, 1908ի Նոյ. 1ին կ'արժանանայ կրօնաւորական սուրբ սքեմին, սկսելով իր նորընծայութեան երկամեայ շրջանը, կոչուելով Սրապիոն: 1910ի Նոյ. 13ին մշտնջենապէս կը կապուի Մխիթարեան Մխարանութեան, կրօնաւորական սուրբ ուխտերով:

Երեք տարի ետք, Մեծաւորներու կարգաւորութեամբ՝ կը մեկնի Հռոմ, յաճախելու համալսարանական դասընթացներու: Փայլուն յաջողութեամբ կ'աւարտէ ուսման շրջանը, 1920ին, եւ վարդապետական աստիճանի (doctorat) տիտղոս կը ստանայ Դոմինիկեան Հայրերու Angelicum Հաստատութեան մէջ, ուր իր ավարտածու կը ներկայացնէ հայրախօսական ու եկեղեցապատմական խոր հմտութեամբ մշակուած ուսումնասիրութիւն մը «Բաղկեղտի ժողովը եւ Հայերը» խորագրով, մեծամեծ գնահատանքներու արժանանալով բոլոր ուսուցիչներէն:

Այնուհետեւ, Մխարանութեան վարիչներուն անօրինումով՝ կ'անցնի պաշտօնավարելու Հռոմի Մխիթարեան վանատան մէջ, ուր շատ լուսամիտ գեր կը կատարէ փոխ-տեսուչի եւ երբեմն տեսուչի պաշտօնով (1920-1924), չահելով աշակերտներուն եւ օտարներուն սէրն ու համակրանքը:

1925ին կը կանչուի Ս. Դադար, եւ կարճ ժամանակէ վերջ՝ կ'անցնի Մուրատ-Ռա-

փայէլեան վարժարան, իրրեւ Ուսումնապետ: Հոս ալ նոյն վեհանքն եւ զուարթամիտ նուիրումը կը յայտնարէ՝ հոգիներ կը թելու եւ աղղին անքննանքներ հասցնելու դործին մէջ:



Գրադ. Սրապիոն Արբա. Ուլուհոճեան իր գրասեղանին առջեւ

1928ի վերջերը գինք կը գտնենք Սեւր (Փարիզ), ուր կը ստանանք Մուրատեան նորարաց վարժարանի ուսումնապետութիւնը, որ փորձ եւ հմտութիւն կը պահանջէր: Հոն Հ. Սրապիոն, եօթը տարի շարունակ, լոկի աշխատանքով կը շինէ, կը կազմակերպէ, եւ օրէ օր վարժարանին կը թափանչուի մակարդակը եւ ուսումնական մակարդակը կը բարձրացնէ, գտնաւորով այլ հաստատութեան ողին եւ մղիչը:

Սոնորս միարանին դործունէութիւնը եւ բազմապատիկ ձեռքերը կը զբաւեն բոլորին ուշադրութիւնը եւ համակրանքը: 1935ի Օգոստոս 12ին, Ս. Դադարու մէջ զուարթուած Մխարանական Ընդհ. Ժողովի քննադրին, հասարակաց հաճութեամբ վի բնութագրին՝ Մխիթարի Աթոռին վրայ եւ հրճուանքով՝ Մխիթարի Սրապիոն վրդ. կը բարձրանայ Արքայապետ Սրապիոն վրդ.

Ուլուհոճեան, Մխիթարի յաջորդներուն մէջ իրր եօթներորդ Արքայապետ:

Նորընտրի Արքայապետը, չնորհիւ իր անվանդ հաւատքին Աստուծոյ նախախնամութեան վրայ, չնորհիւ իր վարչական խոհեմ եւ աշխուրջ ձեռքերուն եւ հեղահամբոյր ու անձնանկէր նկարագրին, իսկոյն կ'առնինքն բոլոր միարանները՝ միաձուլ առաջնորդելու համար զանոնք իրենց նուիրական ասպարէզին մէջ:

Ու նախ՝ հարթելով ուղին՝ անտեսական տաղնապալից ճգնաժամի մը արհաւիրքներէն, իր ուշադրութիւնը կը դարձնէ զաստիարակչական դործին: Նոյն տարին իսկ կը հիմնուի Հայկալի Մխիթարեան վարժարանը. յաջորդ տարին ալ կը բացուի Աղեքսանդրիոյ Մխիթարեան վարժարանը: Այսպէսով Մխիթարեանները նոր թափով ասպարէզ կ'ընեն արեւելքի եւ արեւմուտքի մէջ (Հայկալ, Աղեքսանդրիա, Պոլիս, Փարիզ), եւ մեր ժողովուրդին հետ սերտօրէն շփուելով, մանաւանդ ստանձնելով հայ մանուկներու զաստիարակու-

Թեան բարձր դերը, իրեն նոր Մխիթար-
ներ կու գան լուսաւորութեան նոր շունչ
մը սփռելու աստանդական հայութեան
սրտին մէջ:

1936ին ամառը կը տօնուի Մուրատ-
Ռափայէլեան վարժարանի հարիւրամեա-
կը, գրական ու զեղարուեստական ճոխ
յայտագրով, քաղաքական ու եկեղեցա-
կան բարձրաստիճան հիւրերու ներկայու-
թեան: Կարծէք յաղթանակի տօնն է, որ
ալիք ալիք կը տարածուի սփիւռքի հայ
զաղութներուն եւ մամուլին մէջ: Մու-
րատ-Ռափայէլեանի դարադարձի չքեղ
տօնախմբութեամբ կը փառարանուի Մը-
խիթարեան դարաւոր կրթական գործու-
նէութիւնը եւ այդ հաստատութեան ան-
խոնջ անդամները՝ համախմբուած Մխի-
թար-Դաստիարակ պատկերին շուրջ: Այս
առթիւ է որ խաղական կառավարութիւ-
նը Գրպժ. Սրապիոն Վրդ. Ուլուհոնեան
Արքայօր կը շնորհէ «S. Lazzaro e Mau-
rizio» կառուցման Հրամանատարութեան
տիտղոսը եւ շքանշանը:

Կրթական հաստատ եւ արդի ծրագրի
մը մշակումով՝ Ս. Ղազարի տպարանէն
հետզհետէ լոյս կը տեսնեն հայրենի ըն-
թերցարաններու շարքեր, հատընտիր ցոլ-
բեր ազգային լաւագոյն հեղինակներէ,
քերականութիւն, հին եւ արդի գրական-
նութեան պատմութեան դասագրքեր:
Մինչ գրական ու բանասիրական ասպա-
րէզին մէջ՝ ժրջան աշխատակիցներով կը
յառաջանայ «Բազմավեպ»ը, որուն հա-
րիւրամեակը (1843-1943) կը զուգարկի
պատերազմի տխուր օրերուն:

1939-1945ի համաշխարհային պատե-
րազմը կը թուի նաեւ խեղդել Մխիթարի
յաջորդին ազգանուէր ծրագրերը: Ի-
րօք, լեզգոնական ոյժերու դիմաց՝ կը
փակուի փարիզի վարժարանը, մինչեւ
իսկ կը ուժակոծուի այդ նուիրական բոյ-
նը: Բայց անվեհեր կը տոկան արեւելքի
պատնէշները: Ու Գրպժ. Սրապիոն Վրդ.
Ուլուհոնեան ձեռնհասօրէն կը զեկա-
վարէ Մխիթարի լստատփայտը՝ անընդ-
հատ կրակէ ջերհեղեղին մէջ: Յաջորդա-
կան այլեւայլ խառնակ տիրապետու-

թեանց ընթացքին, ան կը յաջողի անվը-
նաս ու անձեռնմխելի պահել Մխիթարի
դաստակերտը՝ Ս. Ղազարը, իր ձեռա-
դիրներով, գրադարանով, թանգարանով
եւ եկեղեցական արժէքաւոր սպասներով:

Պատերազմի սկզբնական շրջանին, 1940ի
Մայիսին, Արքայօր Սրապիոն Վրդ. Ու-
լուհոնեան կը բոլորէ իր Քահանայու-
թեան 25ամեակը. արտաքին հանդէսներ
չեն կատարուիր, սակայն Մխիթարի դա-
ւակները անհուն երախտագիտութեամբ
կը տօնեն այս յիշատակը, թէեւ անձուկ
շրջանակի մէջ միայն:

1946ի Սեպտ. 2ին, յետ պատերազմին
առաջին Ընդհ. Ժողովին մէջ, Գրպժ. Սը-
րապիոն Արքայօր մեծ խանդավառու-
թեամբ կը վերընտրուի որպէս Հայր եւ
Վարիչ Մխիթարեան Ուխտին: Ու անդամ
մըն ալ անոր առջեւ կը խոնարհին Միա-
բանները, տեսնելով անոր անձին մէջ ար-
ժանաւոր յաջորդը Երանաշնորհ Հիմնա-
դիրն:

Եւ ահա Սեւրի Մուրատեան վարժարա-
նը, փրկելի հաւին նման, կը վերածնի իր
աճիւններէն: Վենետիկի Մուրատ-Ռափա-
յէլեանը կը վերընծիւղի: Իսկ Լիբանա-
նեան լեռնաբարձունքին վրայ, Պիքֆայա-
յի մէջ, 1947ի վերջերը կը բացուի վանքին
Ընծայարանը, Մխիթարեան Միաբանու-
թեան ապագայ յոյսերու անդրանիկ
դարբնոցը, վանքին համար ամէնէն կա-
րելոր ձեռնարկը:

Կը տօնախմբուի «Բազմավեպ»ի հա-
րիւրամեայ յօրելեանը (1947ին), սփիւռ-
քէն եկած պատգամաւորներու խուռնե-
րամ խուժումով եւ մեծ ոգեւորութեամբ:
«Գեղունքի» իսկական յաղթանակ մը կ'ըլ-
լայ յետպատերազմեան գրական ու զեղ-
արուեստական արշալոյսին:

Երրորդ մեծ յօրելեանը, 1949-50ի շըր-
ջանին, կու գայ յաւերժացնելու Մխիթար
Արքայօր մահուան երկուհարիւրամեա-
կի նուիրական յիշատակը: Փառաօն մը
իսկապէս, որու ընթացքին, սփիւռքի մա-
մուլը, եկեղեցական պետերն ու ներկա-
յայցուցիչները, օտար թէ հայ, կը փու-



Գրպժ. Ս. Արքայ. Ուլուհոնեանի Արքայօր ընտրութեան առիթով, 1935

թան իրենց դնահատանքի արդար մաս-
նակցութիւնը բերել Մխիթ. Միաբանու-
թեան եւ անոր արժանաւոր Պետին: Եւ
Արքայօր Սրապիոն Վրդ. Ուլուհոնեան,
այս անգամ Քրանսական կառավարու-
թեան կողմէ կը ստանայ «Պատուոյ Լե-
գեոնական ասպետութեան» շքանշանը:
Արդար վարձատրութիւն եւ դնահատանք՝
իր եւ իր Միաբանութեան շահած բարձր
վարկին եւ համակրանքին:

Միեւնոյն յօրելեանին առթիւ լոյս կը
տեսնէ «Գեղունքի» նոր թիւ մը, սփիւռքի
բազմաթիւ աշխատակիցներու մասնակ-
ցութեամբ, պատմական ու զեղարուես-
տական ճոխ բովանդակութեամբ: «Բազ-
մավեպ»ի բացառիկ թիւը 1949, թիւ 7-12,
հայ եւ օտար մասնագէտ բանասէրներու
օժանդակութեամբ՝ կու գայ զծել Մխի-
թար Արքայօր գէմքը իր դարուն հարա-
գատ պատկերին մէջ:

Յօրելիական հանդէսները կը շարու-
նակուին սփիւռքի Մխիթարեան վարժա-

րաններուն մէջ: Գրպժ. Արքայօրը, այդ
առթիւ, կ'անցնի Եզրպոստ, Սիւրիա, Լի-
բանոն եւ հուսկ՝ Փարիզ. ամէն կողմ կը
գտնէ խանդավառ ընդունելութիւն, յար-
գանք ու համակրանք՝ Մխիթարեան Միա-
բանութեան, անոր բոլոր անդամներուն
եւ յատկապէս անոր Պետին հանդէպ:

Սակայն հեռաւոր Արքայօրը, յաղթա-
նակի այդ ուխտանահար մէջէն, չի կա-
սիր անխոնջ ջանքերով իրագործելու
երազային ծրագիր մը՝ Ս. Ղազար կղզիին
ընդարձակութիւնը: Նախախնամութեան
լուհոնեան այս նշանակալից եղելութիւ-
նը, որուն հնարաւորութիւնը կը պարտի
Խաղիոյ բարեշնորհ կառավարութեան:

Անխոնջ Արքայօր ճիւղերով եւ միաբան-
ներու ժիր աջակցութեամբ՝ Մխիթարի
կղզին կը քառապատկուի, կը բարձրա-
նան անոր նոր պարիսպները՝ վեհանձն
բարերարներու օժանդակութեամբ, նո-
րատունկ ծառերն ու բուսաբերութիւնը կը

